

IA  
Holy Cross  
Toronto  
LETTER TO

Թիւ 27589  
Նոյեմբեր 24, 1981

Արժանաշնորհ  
Տ. Յուսիկ ԶԻՆՅ. Նշանեան  
Առժամայ Հովիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ  
Նախագահ Եփական Խորհուրդի  
Գանասա.

Սիրելի Տէր Յուսիկ,

Ստացած ենք Հոկտեմբեր 21, 1981 թուակիր նամակ մը Ռանըլտ Սիւլլըր փաստաբանի ստորագրութեամբ, որ Սուրբ Խաչ Եկեղեցւոյ վճարելիք թեմական տուրքերու կապակցութեամբ թելադրութիւն կ'ընէր եւ 1000 --մէկ հազար-- տուարի փոխելը մը ներփակած էր:

Թեմական Խորհուրդի Հոկտեմբեր 28 նիստին մէջ անուամբ որոշումին յամաձայն, փաստաբանին վերադարձուցինք փոխելիք՝ յայտնելով որ Առաջնորդարանը իր ծուխերուն հետ ուղղակի կը հաղորդակցի:

Եփական Խորհուրդիդ սարսականութիւնն է հնազանդի Հայց. Եկեղեցւոյ կանոններուն եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի կանոնադրութեան, իբրեւ Թեմական իշխանութեան հրամանով կազմակերպուած համայնք մը:

Գանասական կառավարութեան հետ որեւէ օրինական հարցի մը առջեւ զանուելու սարսազային թեմական իշխանութիւնն է որ պիտի ներկայանայ իր փաստաբաններով, պաշտպանելու իմար թեմի ծուխերու իրաւական կացութիւնը:

Անգամ մը եւս ձեզի կը հրահանգենք որ ամբողջութեամբ վճարէք Թեմական ծոզովի կողմէ որոշուած ծախքիդ քածին հանուած թեմական տուրքը, որուն անվճար քանակը ձեր ցանցառութեան պատճառաւ բարձրացած է մինչեւ 17,000 --տասնըեօթը հազար ութսուն-- ամերիկեան տուարի:

Նաեւ վերջին պատեհութիւն մը կուտանք ձեզի՝ ներկայանալու թեմական տորհուրդին, եւ Սշղելու ձեր կացութիւնը:

Ուստի, կը հրահանգենք ձեզի որ Ս. Խաչ Եկեղեցւոյ ծխական տորհուրդիդ կողմէ երեք անձեր նշանակէք որոնք լիազօրուած ըլլան յանուն ծխական տորհուրդին պատասխանելու իրենց ուղղուելիք հարցերուն: Այս ժողովի թուական նշանակած ենք 1981 Դեկտեմբեր 18, Ուրբաթ, Նիւ Գրիթլն Գրնէթիքէթի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ սրահին մէջ, ուր եւ պիտի զուարուի թեմական տորհուրդի ժողովը:

Կը ներկայենք օղանաւային ընկերութեանց երթուղարձի ժամանակացոյցը եւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ հասցէն ու հեռաձայնի թիւը:

Ձեր ներկայացուցիչները պէտք է իրենց հետ բերած ըլլան 17,080 --տասնըեօթը հազար ութսուն-- ամերիկեան առլարի փոխ-զիւր մը:

Որեւէ պատճառաւ այս հանդիպումին նպատակը ձախողելու պարագային, թեմական տորհուրդը իր որոշումը պիտի առնէ հետացնելու Հոգեւոր Հովիւը եւ պաշտօնանկ ընելու ծխական տորհուրդը:

Կը յուսանք որ ծխական տորհուրդդ իմաստութեամբ եւ հաւատարմութեամբ կ'ենթարկուի թեմական իշխանութեան հրահանգներուն՝ ապահովելու համար խաղաղ բարգաւաճումը ծուխին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Օրինակ՝ ծխական տորհուրդի Ատենապետին